ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2019 թվականի մարտի 5-ին գումարված նիստերի մասին

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն **Խ-004-17.01.2019,26.02.2019-ՊԱ** **Բաբկեն Տեր Գրիգորյան**	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 98 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով, ապա երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 119 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
2.	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»	**ԱԺ պատգամավոր** Տիգրան Ուրիխանյան **Պ-005-18.01.2019-ԳԿ** **Արևիկ Անափիոսյան**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 116 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ ձայներով
3.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների մասին» կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդում	425-08.01.2019-ՊԻ **Տիգրան Մուկուչյան**	Ազգային ժողովն ընդունեց ի գիտություն ԿԸՀ-ի հաղորդումը

Մարտի 5-6-ի նիստերի ընթացքում՝

- Հայտարարությամբ հանդես եկան 10 պատգամավոր,

- 41 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը:

ՀՀ Ազգային ժողովը մերժեց մի շարք օրենսդրական նախաձեռնություններ ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին հարցերը՝

- «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (Հեղինակներ՝ Գեւորգ Պետրոսյան, Նորա Առուստամյան, Վարդան Ղուկասյան, Արթուր Գրիգորյան, Հրանտ Մադաթյան, Պ-006-23.01.2019-ՄԻ-011/0) – **(36 կողմ, 53 դեմ, 3 ձեռնպահ)**,
- «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» (Հեղինակ՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն, Խ-001-16.01.2019-ՊԻ-011/0) – **(35 կողմ, 61 դեմ, 4 ձեռնպահ)**,
- «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Հեղինակ՝ Նաիրա Զոհրաբյան, Պ-003-16.01.2019-ՊԻ-011/0) – **(37 կողմ, 67 դեմ, 2 ձեռնպահ):**